

ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում թիվ 2113314 ստուգման ակտի նախագիծը կազմվել է 16.05.2012թ-ին, իսկ ստուգման ակտը՝ 17.05.2012թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է ոչ թե ստուգման ակտի նախագիծը կազմելու օրվանից 5 աշխատանքային օր, այլ՝ 1 օր հետո:

Վերոգրյալից հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է (ընդունվել է) <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ:

Բացի այդ, << ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ուսումնասիրության հանձնարարագրերում արտացոլման ենթակա տվյալների, ստուգումն (ուսումնասիրությունն) իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որը << ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 գրությամբ հասցեագրվել է << ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին:

Ընթացակարգի <<ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձևը> բաժնում նշված է, որ համապատասխան գործողություններ կատարելուց հետո գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից պետք է ետ վերադարձվեն տնտեսավարողին, ետ ստանան հսկիչ գնման գումարը, որից հետո տպեն վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում Ընթացակարգով սահմանված վերոգրյալ գործողությունները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից չեն կատարվել:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ Մաշտոցի <Տ 17.05.2012թ. թիվ 2113314 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ